

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆՈՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹՒՆՆԵՐ.

(Շարունակելիս).

ԽԱ.

Դալի-Նափայ լեարը. նորա էկեղեցին. ԳեօՆանի գեղի աւերակները. Գեօգաթա գեղը. Հերհէր գեղի սորբ Ասորուսթաթին էկեղեցին. նորա արյանագործութիւններն և պարտութիւնը. Հերհէր գեղը և նորա աւերակները. Գեօգրաշ լեւան ամրացը. Շաշ Տիայնակեցի Տասորուրը. Բոլախար և Աւինջ գեղերը. Շիրին Սուլթանը և նորա աստղարտութիւնը:

Քարոտ, նեղ, ծուռ, լեռնային ճանապարհը Արգեագ գիւղից դէպի արևելք աստիճանաբար բարձրանում է մինչև լայնանիստ բարձրադիր հրապարակը, որի արևելեան եզրում հսկայօրէն՝ առաւել ևս բարձրանում է Դալի-Նափայ սարը, որ Ջալալեանի գրքի մէջ մկրտուել է Գագաթաթա՛ն անունով: Հեռուից ես դիտում եմ նորան: Լայնանիստ լեռնային դաշտի վերայ նա բարձրանում է կոնաձև: Նորա համարեայ ուղղահայեաց լանջերը ծածկուած են տեղ արտերով և տեղ կանաչ արօտատեղերով, ուր ցրուած արածում են ոչխարների հօտը: Թուռումէ, թէ՛ նորա գագաթը հարթ տափարակ է: Աստիճանաբար մօտենում եմ նորա ստորոտին: Լեռան արտաքին շերտերը բաղկացած են մանրացած, հող դարձած հրաբուխային թեթև քարերից, որոնք մինչև հաւկթի մեծութեան խոշորանում են դէպի գագաթը: Նորանց գոյնը սև և կարմիր է:

Սարի լանջերն այնքան մօտենում են ուղղահայաց դիրքի, որ թէ՛ ոտով և թէ՛ ձիով անկարելի է ուղիղ բարձրանալ: Հնարաւոր է, այն էլ ոչ առանց դժուարութեան, օձապոռոյտ ուղղութեամբ: Յարմարին և ցածր կողմը բարձրանալու հա-

մար Հարաւայինն է: որով ես առաջին անգամ բարձրացայ 1877 թուականի օգոստոսի 21 ին կէս օրուայ արեգական ճառագայթների տակ: Ստորոտից մինչև գագաթ Հասնելը ձիով պահանջեց ինձանից միայն կէս ժամ: Զարչարանքով շտապում էի դուրս գալ գագաթը և Հանգստանալ նորա երևակայական Հարթ տափարակի վերայ: Բայց որքան խորթ տպաւորութիւն գործեց երբ ընդարձակ տափարակի փոխարէն ես յանկարծ կանգ առայ մի ահագին խորածոց կաթսայի շրթանց վերայ: Յետևդ վիհ: առաջդ վիհ: երկուսն էլ ծածկուած խիտ առ խիտ խոտերով գոյնզգոյն ծաղիկների հետ խառն:

Արտարև Դալիկ-Թափայի ներսը մի ահագին խոր կաթսայի նմանութիւն ունի, որի յատակը ձագարածև նեղանում է: Արևելեան և հիւսիսարևմտեան շրթունքները միևս կողմից առաւել բարձր են: Կաթսայի միայն արևելեան կողմում, ներսը, յատակից դէպի վեր մինչև շուրթը ծածկուած է մեծ և փոքր, կարմիր և սև հրաբխային քարերով, այն ինչ միևս մասերը երևում են զարդարուն ծաղկախառն կանաչ խոտերով:

Սրբազան Զալալեանի գիրքը Դալիք-Թափայի վերաբերութեամբ մի քանի չափազանցութիւններ է թոյլ տալի: Նա որոշում է լեռան բարձրութիւնը երկու ասպարէզով, այն ինչ միայն կէս ժամու ճանապարհ է: Ընդունում է որ կաթսան կգետեղի մինչև 20000 մարդ, այն ինչ նորա յատակի տրամագիծը հազիւ ունենայ 150 200 քայլ: Իսկ Պ. Բագրաձէն սխալմամբ դնում է այդ լեռոն անտառի մէջ, այն ինչ նմուշի համար մի թուփ անգամ կարելի չէ գտնել:

Կասկած չկայ, որ Դալիկ-Թափան Հանգած հրաբուխի բերան է: Նա իւր գործունէութեան ժամանակ ահագին քանակութեամբ քարեր է ձգել իւր շրջակայքը դէպի Արգեազ, Նաւար, Գեօթանլի, Գեօգաբաս, Հերհեր գիւղերը. բայց աւելի առատութեամբ և հեռու տարածել է նա իւր արտահոսումը դէպի հարաւ: այն է դէպի Մալիշկայ գիւղը, մանաւանդ դէպի Մօզ աւանը: Ամբողջ Դարալագեագում ոչ մի տեղ այնքան ահուելի քարակոյտներ չկան՝ որքան յիշեալ տա-

րածութեան վերայ: Այդ արտավիժած և սփռուած ահագին տարածութեան վերայ քարերը մոխրագոյն, սև, և կարմիր են, բազմաթիւ ծակտիկներով և շատ թեթև: Արդեօք ո՞ր դարումն է գործել այդ հրաբուխը: Արդեօք «Բերբեր» դարումը չէ՞ եղել նա, որ տեղիք է տուել Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանին վերագրել քառասնօրեայ շարժը Վայոց ձորում Աստուածային վրէժխնդրութեան Դուխնցի Ստեփաննոս եպիսկոպոսի նահատակութեան համար*):

Շրթանց վերայ գով է: Օգոստոսի կէսօրեայ արեգական կիզիչ ճառագայթների ազդեցութիւնը մասամբ նուազում է ծաղիկների վերայից թեթև սլացող քամուց: Հեռաւոր շրջակայքում գեղեցիկ տեսարանները միմեանց յաջորդում են: Սակայն այդ բոլորը թողնելով ես առաջարկում եմ ուղեկիցներին իջնել ինձ հետ կաթսայի յատակը: Մի տեսակ սարսուռ է գալի մեր վերայ. ըստ որում խորանալով՝ բացի մի կտոր երկնքից այլ ևս ոչինչ չենք տեսնում: Կարծես կտրուած աշխարհի մասերից՝ մենք իջնում ենք անդունդը: Այդպէս էր թուում ինձ՝ երբ այդ լարուած տպաւորութեան ներքոյ յանկարծ Ֆրւ... Ֆրւ... մեր առաջից դուրս թռաւ անմեղ կաքաւների երամբ: Երբ իջանք բոլորովին յատակը, շուրջ նայեցինք և բացի վճիտ երկինքը և կաթսայի լայնաշուրթ կողերը, այլ ևս ոչինչ բան չէր երևում: Ոչ մի ձայն, ոչ մի շշուշ, ոչ մի քամի, տիրում էր մի տեսակ գերբզմանական լռութիւն, որ երբեմնակի խախտուում էր մեր ցածր խօսակցութեամբ և մեր ձիանց ձայներով իրար հետ կռուելու ժամանակ: Ստէպ ստէպ նայում էի դէպի վեր, դէպի վիթխարի փոսի շրթունքը թէ արդեօք թշնամիները չե՞ն շրջապատիլ մեզ.....:

Սակայն այդ բոլորը երևակայութիւն էր: Իջնելուս նպատակն էր տեսնել այդ՝ աշխարհից կտրուած վիթխարի փոսի մէջ մի հայկական եկեղեցու աւերակ: Տէր Աստուած, ի՞նչ

(*) Записки Люб. Ковк, арх. стр. 141.

օտարոտի երևոյթ է: Ինչպիսի մարդիկ են հայերը՝ որ հիասփանչ լեռներն և գետափնեայ վայրերը թողած՝ մտել են այդ անդունդը... ինչեւիցէ: սկսեցի գննել աւերակները:

Կաթսայի յատակի հիւսիսային կողմում դրած է աւերակ եկեղեցին, որից մնացել են միայն պատերը. Սոքա շինուած են հրաբխային սև, ծակոտեայ քարից: Եկեղեցու երկարութիւնն է եօթը քայլ, իսկ լայնութիւնը հազիւ հինգ քայլ: Նորա միակ արեւմտեան դուռը բացուում է փոքրիկ գաւթի մէջ, նոյնպէս քանդուած, որի դուռը հարաւիցն է: Պատերի վերայ չէ երևում ոչ մի արձանագրութիւն, ոչ մի տառ: Այդ տեղ ոչ մի կաթիլ ջուր չէ երևում, բացի մի փոքրիկ ճահիճ եկեղեցու մօտ: Գուցէ սա լինի Ջալալեանի գրքի մէջ «ականակիտ աղբիւրը»: Քսան քայլ դէպի հարաւ ընկած է մի փոքրիկ տապանաքար առանց որ և է գրութեան: Արեւելակողմի քարակոյտի մօտ երևում են երկու քարաշէն տան աւերակներ: Սոքա են ահա Դալիկ-թափայի բոլոր շինութեանց մնացորդները:

Ես թողեցի այդ խորխորատը և կրկին բարձրացայ կաթսայի շրթունքը, կրկին տեսայ շրջակայքը, կրկին տեսայ լոյս աշխարհը, կրկին ազատօրէն շնչեցի և մի խորօտ հայեացք ձգելով փոսի վերայ՝ քայլերս շրջեցի դէպի ստորոտը:

Դալիկ-թափայի և նորանից դէպի հիւսիս եղած Քեօթանլուի բարձրութեան արանքում արեւելից արեւմուտ ձգուում է մի նեղ դաշտ, որի երկարութեամբ անցնում է ճանապարհը Հէրհեր գիւղի գետակի աւազանից դէպի արեւմուտ, ուր դաշտի ծայրում լեռնագօտու լանջով իջնում է Կաբախլու գիւղի վերայ և այնտեղից Ալագեազի գետի վերայ. (գլ. 12): Յիշեալ դաշտի արեւելեան ծայրին մօտ սփռուած են հին գիւղատեղի լայնանիստ աւերակները, նորա մի քանի ընդարձակ գերեզմանատներով և մի հասարակաշէն եկեղեցիով: Աւերակ գիւղի հին անունը յայտնի չէ, իսկ այժմ կոչվում է Քեօթանլի, ըստ որում այդ աւերակների վերայ էր այն թրքաբնակ գիւղը, որ մի քանի տարի առաջ, շրի հեռաւորութեան պատճառով, տեղափոխուեց քիչ դէպի արեւմուտը:

Գիւղի աւերակներէց դէպի արեւմուտ, Հին ճանապարհի եզրում կանգնած են միմեանց կից երկու ահագին որմնափակ խաչքարինք, որոնցից Հիւսիսայինը 20 տարուց աւելի է մաշուած ընկած է: Իսկ հարաւայինը դեռ ևս կանգնած է և ծաղկահիւս նկարների մէջ ներկայացնում է երկու փորագրուած պատի, մինի տակը գրած է «Սուրբ Պետրոս» և միւսի տակը «սուրբ Պողոս»: Խաչքարի վերի մաշուած արձանագրութիւնից նշմարելի է միայն թուականը, այն է «թվ. 21», (710): Հարաւային պատի վերայ փորագրած է արևի ժամացոյց հայկական տառերով: Խաչքարերի շուրջն ևս ցրուած են մի քանի տապանաքարեր:

Այժմեան մարդաբնակ Գեթթանլի գիւղը զետեղուած է լեռնագօտու ստորոտում, փոքրատարած հովտի վերայ, բարակ վճիտ առուակի ափերում: Հովտի մէջ, շրասուռն եզրնեւում կարելի էր գեղեցիկ ծառեր տնկել, բայց այդ թուրքի բանը չէ և նորա ճաշակից հեռու է: Դորա համար գիւղը երևում է իբրև մի անշնորհ տեղ, աջ և ձախ ցրուած անձոռնի տներով: Այս նոր Գեթթանլին նոյնպէս շինուել է Հին, հայկական աւերակների վերայ, որի ապացոյցն է Հին եկեղեցու մնացորդքը և նորա մօտ մի բարձր, կանգուն խաչքար բլրակի լանջի վերայ գետակի ձախ ափում: Սորանց մօտ այժմ շինած է մի փոքրիկ շրահաց:

Յիշեալ խաչքարը կապոյտ քարից է, ունի երեք արշինից աւելի բարձրութիւն և որ առաւել նշանաւորն է՝ կարծես Դարալագեագի բազմաթիւ խաչքարերի շատ շատերից ամենահինն է: Նա գրուած է հայկական 439 և փրկչական 990 թուականին: Ահա նորա արձանագրութեան պատճէնը: «Ես Գրիգորիկ, որդի Գէորգ . . . (պակաս) Աստուածային տեսչութեամբ գտի զարձանս, բազում աշխատութեամբ և մեծ յիսայիվ բերի դուռն եկեղեցւոյս կանգնեցի սուրբ խաչ իմ զաւակաց արեւատութեան, որ աւուր գալստեան Որդւոյն Աստուծոյ առեալ զսա զամբար լուսոյ ընդ առաջ տեառն և զփառս Քրիստոսի որք ընթեռնուք զգծագիրս ի վէմս քանդակեալս՝ յիշեցէք և զիս զյաւգնամեղս:» Իսկ արեւմտեան

ճակատի վերայ դրօշմած է «Թ. ՆԼԹ. (439—890) ի թագաւորութեան Սմբատայ որդւոյ Վասակայ կանգնեցաւ նշանս ի ձեռն Գրիգորիայ յիշեցէք Աստուած:»

Քեթիանլուի բարձրութեանց առուակներինց կազմուում է մի գետակ և հոսելով դէպի արևելահարաւ՝ ցած է ընկնում մի ջրվեժից դէպի Գեօգաբաս գիւղը և այնտեղից Հերհեր, Բուլախլար և Առինջ գիւղերը ոռոգելով ընկնում է Արփաչայի մէջ: Գետակը չունի անուն: այլ իւրաքանչիւր գիւղի մօտ ստանում է նորա անունը: Ես ևս հետևելով նոյն գետակի հոսանքին դուրս եմ գալի Քեթիանլուից: իջնում եմ դէպի Գեօգաբաս գիւղը այն բարձր ժայռի ելեէջ ճանապարհով: որ կախուած է յիշեալ գիւղի վերայ և ուր գոյանում է գետակի ջրվեժը:

Գեօգաբասից սկսած մինչև Առինջ գիւղը, մօտ քսան վերստ երկարութեամբ գետակի ափերը արդէն զարդարուում են մանրածառ անտառով: Տեղ տեղ հանքային աղբիւրները դուրս են բերում իւրեանց երկաթախառն ջրերը: որոնցից մարդիկ դեռ ևս ոչինչ օգուտ չեն քաղում: Գետից դէպի արևելք տարածուում է նորաբոյս անտառը: իսկ դէպի հարաւ ու արևմուտ վարելահողեր:

Գեօգաբաս գիւղը այդ դետակի ձախ ափում թրքաբնակ է և սփռուած է հայ աւերակների վերայ: Աւերակ եկեղեցուց մնացել են միայն հիմնապատերը, մի քանի կանգուն խաչքարերով: Վերջիններից մինի վերայ քանդակած է Քրիստոսի պատկերը: ունենալով աջ և ձախ կողմից մի մի աղանի կանգնած: Երկու խաչակիր մարդիկ աջ և ձախ կողմում, իսկ սոցանից ցած առիւծ և ցուլ: Արձանագրութիւնն է «ի թվ. ՋԼԳ. (994) Յիշատակ մօր իմոյ Ուլուխաթունին:» նոյն խաչքարի ճակատին գրած է «Ես վարդանոտթօս կազմեցի զխաչս ի փրկութիւն Խաչատուրին:» Սորա մօտ կանգնած խաչքարի արձանագրութիւնն է «կամաւն Աստուծոյ Ես Խաչատուր Էրեցերկի կանգնեցի զայս խաչս հոգւոյ փրկութեան պարոն Սմբատին և իւր թողին: որ կարդայք յիշեցէք ի Քրիստոս, թ. ՋԼԸ. (938):»

Նոյն եկեղեցու մօտ կան այլ ևս խաչքարինք և ունին Հետեւեալ արձանագրութիւնը. «Ես Արղուժէս կանգնեցի զխաչս ի վերկութիւն Հոգւոյ իմոյ Բաբին յիշեցէք ի քրիստոս: Իսկ միւսի վերայ «Յանուն Աստուծոյ ես Սալամս կանգնեցի զխաչս եղբօրն Աթմանդին որ մնաց. . . . ով կարդաք յիշեցէք ի Քրիստոս ԸՃԽԹ (849): Եկեղեցու Հարաւային պատից մի քանի քայլ Հեռու կողքի վերայ դրած մի տապանաքարի վերայ նկարած է նիզակը ձեռին մի ձիաւոր, որի գլխին Ջալալեանի գիրքը սխալմամբ դրել է արձակած մագեր և սրածայր խոյր: Սորա արձանագրութիւնն է. «Ես Մարգարս կանգնեցի զխաչս եղբօրս Թադէոսին, որ է որդի Մելիքբէգին ՌԾԲ. ԹՎԻՆ. (1052):

Եւ այսպէս՝ յիշեալ արձանագրութիւնները ցոյց են տալի որ մինչև 1603 թուականը և դորանից յետոյ էլ այդտեղ բնակուելիս են եղել Հայերը, սակայն գիւղի Հայկական անունը աւանդաբար չէ Հասել մեզ: Շարունակում եմ ճանապարհս խոխոջիւն գետակի ափով և երկու երեք վերստ անցած Հասնում եմ սուրբ Աստուածածին եկեղեցու աւերակներին գետակի աջափնեայ ցածր ժայռի գլխին: Եկեղեցիք երկու են միմեանց կից, ուստի թուրքերը երբեմն կոչում են Ղոշավանք: Սոցա շուրջը կան շատ պտղատու ու վայրենացած ծառեր, որ գուցէ երբեմն այստեղ եղած է վանքապատկան այգի:

Նախ քան եկեղեցիներին մօտենալը՝ զննենք շրջակայ աւերակները: Ժայռի տակ, Հարաւային կողմում, գետի ձախ եզրում երևում է մի ձիթահանք իւր բոլորակ քարով: Նա անշուշտ վանքապատկան է: Ահա մտնում եմ մենաստանի քանդուած պարսպի մէջ, ուր կան մինչև երեքսուս սենեակների հիմնապատեր: Շատ տապանաքարերից մինի վերայ երևում են Հետեւեալ տեսարանը: Պարոնը նժոյգ ձիու վերայ, կապարճը լիք նետերով՝ լարել է աղեղն և պատրաստում է արձակել: Ծառան կանգնած նորա առաջ մի ձեռով բռնել է պարոնի ձիու սանձը, միւսով—բազէն: Այդ Հերոսական ընդդէմ որ աղեղը պէտք է բացուի և նետը սլանայ օդի մէջ, պարոնի

միւս ծառան պատրաստել է մի ձեռում գաւաթով գինի, միւսում բաժակ: Քարի միւս երեսում մի մարդ բռնել է շրդ-թայով առիւծը որ արդէն յարձակուել է ցուլի վերայ: Տէրը կանգնած թէև մեծ փայտ ձեռին, սակայն անզօր առիւծի դէմ: Հերոսական սոյն տապանաքարի արձանագրութիւնն է «Այս է Հանգիստ Ղարպարին»: որ կէս աւրէ Հանգեաւ ի Քրիստոս թվ. ՌԸ (1008):

Եկեղեցու արևելեան պատի տակ ժայռի գլխին տափակ գերեզմանաքարի վերայ գրած է «Ես Վարդան վարդապետ կազմեցի տապանանիս ամուսնոյս Թերոյս ոչ որդի ունէր, ոչ աղբեր, ով կարգէք յիշեցէք ի թ. 21Ծ. (745): Երկու խաչքարերից կանգունի վերայ դրօշմած է «Ես Հայրապետ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկութիւն Հոգւոյ Մարինային յիշեցէք ի Քրիստոս. թվ. ՌՂԸ (1098). իսկ խոնարհուած խաչքարի վերայ «Խաչս փրկութիւն Հոգւոյ Հայրապետ եպիսկոպոսին թվ. ՌՂԸ. (1098):»

Ոմն Աղբարոս անուն 740—1291 թուականին կանգնեցրել է իւր Շահակ որդու յիշատակին մի խաչքար: Մի այլ խաչքարի վերայ արձանագրած է «Կամաւ Հզօրին Աստուծոյ յարհիւական քաջապետութեան տեառն Յ. Վ. և ի պատրոնութեան տեղւոյս Ուքանայ, Հասանայ, Ամադինայ եսնուաստ Հոգի Վարդան վարդապետս կանգնեցի զսուրբ նշանս ի փրկութիւն ինձ և Հարազատին իմոյ Միխիթարայ և որդւոյ նորին. ի թվին 2ԾԹ. (759—1310):» Երրորդ խաչքարը կանգնեցրել է Յակոբ արեղան Սերովբէ եպիսկոպոսի յիշատակին ՌԾԸ (1018—1569) թուին: Կան և մի քանի ուրիշ արձանագրութիւններ, բայց աննշան և առանց թուականի:

Ահա սոքա են եկեղեցիները շրջապատող անգիր տապանաքարերի մէջ ցանուցիր գրաւոր յիշատակարանները, որոնք կհարկաւորուին մեզ մենաստանի պատմութիւնը կազմելու: Նոյն նպատակի համար այստեղ արժանի է յիշատակել և մի փայտեայ գերան մենաստանի հարաւային կողմի ժայռի անկիւնում, ուր այդ գերանի վերայ բարձրանում է մի պատիբրև եկեղեցու անկիւնի ամրութեանը նեցուկ: Գերանը իւր

ամբողջութեամբ ապացոյց է որ մօտաւոր ժամանակներու մայր տեղ եղել է բնակութիւն, վերահսկողութիւն և այլն:

(Շարունակելէ)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ Ապրիլ ամսոյ 25-ին Ազգիս Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց ուղևորուիլ դէպ Երևան Պարսից Շահի հետ տեսակցելու համար:

Նոյն օր առաւօտեան ժամ 9-ին երբ Նորին Օծութիւնը եպիսկոպոսներով վարդապետներով և բոլոր միաբաններով և ժողովրդականաց խուռն բազմութեամբ հանդիսաւոր կերպիւ իջաւ Վեհարանից, մտաւ Ս. Էջմիածնի Տաճարը և Միածնատէջ Ս. Սեղանի առաջ աղօթելուց յետոյ, ելաւ Տաճարից և երկկարգ շարուած ձեմարանի աշակերտաց միջով անցնելով և օրհնելով նորանց, նստեց հիւսիսային դրան առաջ սպասող կառքում, ունելով իւր հետ ուղեկիցներ, Սինօդի անդամ Գեր. Երեմիա, Ներսէս, Սարգիս և Մամբրէ եպիսկոպոսներ և իւր գաւազանակիր Արժ. Սահակ վարդապետը և Սինօդի առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր Ռուբէն Մելիք-Աղամեանցը:

Վաղարշապատից սկսեալ մինչ Երևանայ այգիներն, Վեհափառ Կաթողիկոսի գնացքը շրջապատուած էր ոստիկանութեան ներկայացուցիչներով և այլ բազմութիւ հեծելազօր պահուորդներով և ժողովրդով: Վեհափառ Հայրապետի կառքի առաջից ընթացող ձիերի վերայ նստած գնում էին երկու վարդապետներ, Հայրապետական խաչն ու գաւազանն ի ձեռին: Երևանայ այգիներին մօտենալուն պէս, դիմաւորեցին Նորին Օծութեան Երևանայ Փոխանորդ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսն քահանայական դասով, Քաղաքագլուխը՝ քաղաքային վարչութեան տնօրէններով, ոստիկանապետը՝ բազմութիւ հեծելազօրներով և